ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ
«ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ» ԱՆՎԱՆ
ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ Р. Г. ГЮМРИ
ПОЛИКЛИНИКА ИМЕНИ
"ЭНРИКО МАТТЕ"
ЗАО

**377500**, Գյումրի, Շիրակացի **13**
Հեռ. /374 312/ 3-31-78

377500, г. Гюмри, ул. Ширакаци 13
Հեռ. /374 312/ 3-31-78

<<ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/4>>ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

Հարգելի Մասնակից

<<ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Շիրակի մարզի Գյումրու <<Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա>>ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նշված ապրանքները: Ապրանքի մատակարարման պայմաններն են համաձայն առաջարկված պայմանագրի նախագծի:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Շիրակի մարզ , ք.Գյումրի Շիրակացի 13 հասցեով մինչև 2014 թվականի ապրիլի 17-ին ժամը 11.00-ն:

Հայտերը կբացվեն Շիրակի մարզի Գյումրու Շիրակացի 13 հասցեում տեղակայված Գյումրու «Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վարչական շենքում, 2014 թվականի ապրիլի 17-ին ժամը 11.00-ն:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը: Հայտն անրաժեշտ է ներկայացնել <<ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/4/1>> գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանությամբ ապահովման և /կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթերը և /կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և /կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ

  հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնկիցներին պատվիրատու կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝

  հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և /կամ տվյալները:

ՇՄԳՅՈՒՄՐՈւ «ԷՆՐԻԿՈ-ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ

ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»ՓԲԸ ՏՆՕՐԵՆ՝ Գ.Մ.ԱՂԱՄՅԱՆ

04.04.2014թ

ՆԱԽԱԳԻԾ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՄԳԷՄ-ՇՀԱՊՁԲ-11/4

## ԴԵՂՈՐԱՅՔԻ և ԲՈՒԺ. ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԳՆՄԱՆ

ք. Գյումրի «04»ապրիլի 2014թ.

Գյումրու <<Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա>>ՓԲԸ, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս տնօրեն՝ Գ.Ադամյանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) , մի կողմից և ______________________ դեմս Ընկերության տնօրեն _________ (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայամանգրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված դեղորայքի (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և դրա համար վճարել:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին՝ պատվիրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2.2 Վաճառողը պարտավորվում է ապահովել ՀՀ կառավարության 23.11,2006թ. N 1717-Ն որոշմամբ և ՀՀ առողջապահության նախարարի 27,01,2005թ, N 74-Ն հրամանով սահմանված կարգով անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի հատկացման դեպքում համապատասխան դեղատոմսերի հիման վրա դեղորայքի տրամադրումը հիվանդներին Գյումրու <<Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա>>ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող դեղատան կամ դեղատնային ցանցի միջոցով:

2.3 Բացառությամբ սույն պայմանագրի 2,1 կետում նշված դեպքի, Ապրանքի մատակարարումը իրականացվում է Գնորդի կողմից յուրաքանչյուր եռամսյակ:

Վաճառողին ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ եռամսյակային կտրվածքով:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չհանձնվելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի N1 հավելվածի պահանջներին չհամապատասխանող Ապրանք

ա) Չնդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի

7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3. Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանգրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելու հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանգրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ---------- (---------------) դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20

բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ 2014թ. դեկտեմբերի 25-ից:

**5. Ապրանքի որակը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Վաճառողն ապրանքը հանձնում է սույն պայմանագրի N2 հավելվածին համապատասխան ծավալով և ժամկետներում՝ ներկայացնելով հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեղված պատասխանատվության միջոցները:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օվա համար պայմանագրի չկատարված մասի գնի 0.05 տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5%-ի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը (տուգանքը) հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ էին երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և 2014 թվականի ֆինանսական միջոցների հատկացման պահից և գործում է մինչև կողմերի միջև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ կատարումը:Եթե մեկ տարվա ընթացքում ֆինանսական միջոցներ չհատկացվեն, ապա պայմանագիրը կհամարվի առոչինչ;

9.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար:
Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է գնորդի համաձայնությամբ:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

**1)** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

**2)** Սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի քանակի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարմաբ շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի

կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Սույն պայմանգիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանգրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

*Գյումրու<< Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա >>ՓԲԸ*
ք.Գյումրի, Շիրակացի 13
ՀՎՀՀ 05502201

ՀՀ <<Ինեկոբանկ>>ՓԲԸ
Գյումրու մ/ճ Հ/Հ
205012300112.1001

Գյումրու<< Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա >>ՓԲԸ տնօրեն՝ Գ.Մ.Ադամյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N1

"_____"_______________2014թ. Կնքված

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/4/1>>

## Գյումրու «Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա » ՓԲԸ-ի 2014թ.-ի կարիքների համար գնման ենթակա դեղորայքի և պատվաստանյութերի

## Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն   Բ Ն Ու Թ Ա Գ Ի Ր

| Չափաբաժին | Գնման առարկայի անվանում | Չափման միավոր | Գնման առարկայի տեխնիկական և այլ բնութագրիչ տվյալները |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Դիյատրենդ 6,25մգ | հաբ | 6,25մգ դեղահատեր՝բլիստերիում,չփշրվող |
| 2 | Դրիպտան 5մգ | հաբ | 5մգ դեղահատեր՝չփշրվող,չվնասված ամբողջականությունը պահպանված |
| 3 | Տեգրետոլ 200մգ | հաբ | 200մգ դեղահատեր՝բլիստերիում,չփշրվող |
| 4 | Տրամադոլ 50մգ | հաբ | դեղապատիճներ 200մգ՝չվնասված ամբողջականությունը պահպանված |
| 5 | Տրամադոլ100մգ/2մլ | հատ | լուծույթ ներարկման 100մգ/2մլ, 2մլ ապակյա սրվակներ՝չկոտրվող,չվնասված ամբողջականությունը պահպանված |
| 6 | Ֆինլեպսին 200մգ | հաբ | 200մգ դեղահատեր՝չփշրվող,չվնասված ամբողջականությունը պահպանված |
| 7 | Ֆինլեպսին 400մգ | հաբ | 400մգ դեղահատեր երկարատև ազդեցության՝չփշրվող,չվնասված ամբողջականությունը պահպանված |
| 8 | Կետոպրոֆեն 150մգ | հատ | 150մգ, բլիստերում ՝չփշրվող* /տես ծանոթագրությունը/ |
| 9 | Կետոպրոֆեն 25մգ/գ, | հատ | 25մգ/գ, 50գ ալյումինե պարկուճ՝չվնասված, * /տես ծանոթագրությունը/ |
| 10 | Ացետիլցիստեին 100մգ | հատ | 100մգ,3գ փաթեթիկներ՝ գրանուլներ ներքին ընդունման լուծույթի՝չվնասված, * /տես ծանոթագրությունը/ |
| 11 | Ացետիլցիստեին 200մգ | հատ | 200մգ, 3գ փաթեթիկներ գրանուլներ ներքին ընդունման լուծույթի՝չվնասված, * /տես ծանոթագրությունը/ |
| 12 | Կարբամազեպին 200մգ | հատ | 200մգ, բլիստերում՝չփշրվող * /տես ծանոթագրությունը/ |
| 13 | Վալպրոաթթու 500մգ (վալպրոատի նատրիում) | հատ | դեղահատեր թաղանթապատ, երկարատև ազդեցության 500մգ՝չփշրվող * /տես ծանոթագրությունը/ |
| 14 | Ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոնի նատրիում)1000մգ | հատ | դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի 1000մգ,ապակե սրվակներ * /տես ծանոթագրությունը/; |
| 15 | Ցեֆուրօքսիմ 250մգ | հատ | դեղահատեր 250մգ՝չփշրվող * /տես ծանոթագրությունը/; |

| | | | |
|---|---|---|---|
| 16 | Ցեֆուրօքսիմ (ցեֆուրօքսիմի նատրիում) 750մգ | հատ | դեղափոշի ներարկման լուծույթի 750մգ, ապակե սրվակ՝չկոտրվող, * /տես ծանոթագրությունը/; |
| 17 | Իբուպրոֆեն 600մգ | հատ | դեղահատեր թաղանթապատ 600մգ՝չփշրվող * /տես ծանոթագրությունը/; |
| 18 | Բիսոպրոլոլ 2,5մգ | հատ | դեղահատեր թաղանթապատ 2,5մգ՝չփշրվող, * /տես ծանոթագրությունը/; |
| 19 | Սիմվաստատին 20մգ | հատ | դեղահատեր 20մգ՝չփշրվող, * /տես ծանոթագրությունը/; |
| 20 | Պանկրեատին 150մգ | հատ | դեղապատիճներ 150մգ՝չվնասված, ամբողջականությունը պահպանված, * /տես ծանոթագրությունը/; |
| 21 | Մետիպրեդ 4մգ | հաբ | 4մգ դեղահատեր՝չփշրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 22 | Այոտենդին 5մգ/5մգ | հաբ | 5մգ/5մգ դեղահատեր``բլիստերիում,չփշրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 23 | Էնապ H 10մգ/25մգ | հաբ | 10մգ/25մգ դեղահատեր՝բլիստերիում,չփշրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 24 | Պերինդոպրիլ 5մգ | հաբ | 5մգ դեղահատեր՝չփշրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 25 | Կալցի Դ-3 500/200 | հաբ | 500/200 դեղահատեր՝չփշրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 26 | Պիկովիտ 4+ | հաբ | 4+ դեղահատեր՝չփշրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 27 | Նոլիպրիլ Ֆորտե 5մգ | հաբ | 5մգ դեղահատեր՝չփշրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 28 | Ապետիզեր 100մլ | հատ | դեղակախույթ ներքին ընդունման100մգ ապակե շշիկ՝չկոտրվող, չափիչ ներարկիչ կամ չափիչ գդալ, * /տես ծանոթագրությունը/; |
| 29 | Օտրիվին 0,1% 10մլ | հատ | 0,1%,10մլ շշիկ՝չկոտրվող, * /տես ծանոթագրությունը/; |
| | *Բժշկական պարագաներ* | | |
| 1 | Էթիլ սպիրտ 96% | հատ | Ֆլակոն 96% 250մլ չվնասված,չկոտրված ապակե կամ պլաստիկե շշիկ, ամբողջականությունը պահպանվա * /տես ծանոթագրությունը/ |
| 2 | Ներարկիչ 5,0մլ | հատ | Ներարկիչ 5,0- եռակոմպոնենտ, ասեղ 21 G, 22G, 23G: * /տես ծանոթագրությունը/ |
| 3 | Ներարկիչ 3,0մլ | հատ | Ներարկիչ 3,0- եռակոմպոնենտ, ասեղ 23 G: * /տես ծանոթագրությունը/: |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Է.Կ.Գ.-ժապավեն | հատ | Հատ 50x50 * /տես ծանոթագրությունը/; |
| 5 | Սպեղանի 2,5x500 | հատ | Հատ 2,5x500 տուփով՝չվնասված * /տես ծանոթագրությունը/; |
| 6 | Տոնոմետր | հատ | Հատ `չվնասված, ամբողջականությունը պահպանված * /տես ծանոթագրությունը/; |
| 7 | Լյուգոլի ջրային լուծույթ 100մլ | հատ | 100մլ ապակե ֆլակոններ՝չկոտրվող, * /տես ծանոթագրությունը/ |
| 8 | Վալոկարդին 20մլ | հատ | Ֆլակոն 20մլ ապակե շշիկ ՝ չկոտրվող, * /տես ծանոթագրությունը/; |
| 9 | Պարացետամոլ 500մգ | հատ | 500մգ՝չփշրվող * /տես ծանոթագրությունը/; |
| 10 | Հակափայտացման անատոքսին 1մլ | հատ | 0,5մլ/1դոզա,1մլ առկա է 2 դոզա՝ապակե սրվակներ՝ չկոտրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 11 | Հակակատաղության վակցինա | հատ | 1դոզա/1մլ՝ապակե սրվակներ՝ չկոտրվող , * /տես ծանոթագրությունը/; |
| 12 | Կաթոցիկ ROE | հատ | Հատ,ապակյա՝չվնասված, ամբողջականությունը պահպանված * /տես ծանոթագրությունը/; |
| 13 | Արյան անալիզի ազդանյութ/Խոլեստերոլ 1000 թեստ/ | հատ | Տուփ 5x100մլ/ 500 թեստ * /տես ծանոթագրությունը/; |
| 14 | Արյան անալիզի ազդանյութ/Գլյուկոզա 1000 թեստ/ | հատ | տուփ 4*250մլ/ 1000 թեստ * /տես ծանոթագրությունը/ |
| 15 | Յոդի լ-թ 5%-30մլ | հատ | Ֆլակոն 5%-30մլ՝ ապակե սրվակում չվնասված * /տես ծանոթագրությունը/; |

/Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված:

*Մինչև 2 տարի և 2 տարուց ավելի դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետը հանձման պահին պետք է ունենա դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 2/3-ը, իսկ 2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը: Գնորդի պահանջով անվճար(100%) և արտոնյալ պայմաններով տրվող դեղորայքը (50% և 30 % զեղչով) բաց թողնել մատակարարի դեղատնային ցանցերից:

**ԳՆՈՐԴ** **ՄԱՏԱԿԱՐԱՐ**

**«Էնրիկո Մատտեի անվ. պոլ-կա» ՓԲԸ**

ք.Գյումրի, Շիրակացի 13

ՀՎՀՀ 05502201

Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ

Հ/Հ 205012300112-1001

Էլ.փոստ՝ enricomatte@mail.ru

Տնօրեն Գ.Աղամյան

Հավելված N2

"____"______________2014թ. Կնքված

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/4/1>>

## Գյումրու<<Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա >> ՓԲԸ-ի

## 2014թ.-ի կարիքների համար գնման ենթակա դեղորայքի և պատվաստանյութերի

Գնման ժամանակացույց

| Չափաբաժին | Գնման ենթակա ապրանքի անվանումը | Չափի միավոր | Նախատեսվում է գնել 2014թ-ի ընթացքում | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Քանակ | Գումար | Քանակ | Գումար |
| 1 | Դիլյատրենդ 6,25մգ | հաբ | 300 | | 300 | |
| 2 | Դրիպտան 5մգ | հաբ | 300 | | 300 | |
| 3 | Տեգրետոլ 200մգ | հաբ | 2100 | | 2100 | |
| 4 | Տրամադոլ 50մգ | հաբ | 1500 | | 1500 | |
| 5 | Տրամադոլ100մգ/2մլ | հատ | 1000 | | 1000 | |
| 6 | Ֆինլեպսին 200մգ | հաբ | 3500 | | 3500 | |
| 7 | Ֆինլեպսին 400մգ | հաբ | 2000 | | 2000 | |
| 8 | Կետոպրոֆեն 150մգ | հատ | 500 | | 500 | |
| 9 | Կետոպրոֆեն 25մգ/գ, | հատ | 200 | | 200 | |
| 10 | Ացետիլցիստեին 100մգ | հատ | 500 | | 500 | |
| 11 | Ացետիլցիստեին 200մգ | հատ | 500 | | 500 | |
| 12 | Կարբամազեպին 200մգ | հատ | 3000 | | 3000 | |
| 13 | Վալպրոաթթու 500մգ (վալպրոատի նատրիում) | հատ | 200 | | 200 | |
| 14 | Ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոնի նատրիում)1000մգ | հատ | 300 | | 300 | |
| 15 | Ցեֆուրօքսիմ 250մգ | հատ | 150 | | 150 | |
| 16 | Ցեֆուրօքսիմ (ցեֆուրօքսիմի նատրիում) 750մգ | հատ | 50 | | 50 | |
| 17 | Իբուպրոֆեն 600մգ | հատ | 600 | | 600 | |
| 18 | Բիսոպրոլոլ 2,5մգ | հատ | 800 | | 800 | |
| 19 | Սիմվաստատին 20մգ | հատ | 500 | | 500 | |
| 20 | Պանկրեատին 150մգ | հատ | 500 | | 500 | |
| 21 | Մետիպրեդ 4մգ | հաբ | 900 | | 900 | |
| 22 | Այոտենդին 5մգ/5մգ | հաբ | 500 | | 500 | |
| 23 | Էնապ H 10մգ/25մգ | հաբ | 500 | | 500 | |
| 24 | Պերինդոպրիլ 5մգ | հաբ | 300 | | 300 | |
| 25 | Կալցի Դ-3 500/200 | հաբ | 270 | | 270 | |
| 26 | Պիկովիտ 4+ | հաբ | 270 | | 270 | |
| 27 | Նոլիպրիլ Ֆորտե 5մգ | հաբ | 270 | | 270 | |
| 28 | Ապետիզեր 100մլ | հատ | 10 | | 10 | |
| 29 | Օտրիվին 0,1% 10մլ | հատ | 10 | | 10 | |

| Բժշկական պարագաներ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Էթիլ սպիրտ 96% | հատ | 30 | | 30 | |
| 2 | Ներարկիչ 5,0մլ | հատ | 600 | | 600 | |
| 3 | Ներարկիչ 3,0մլ | հատ | 600 | | 600 | |
| 4 | Է.Կ.Գ.-ժապավեն | հատ | 50 | | 50 | |
| 5 | Սպեղանի 2,5x500 | հատ | 190 | | 190 | |
| 6 | Տոնոմետր | հատ | 10 | | 10 | |
| 7 | Լյուգոլի ջրային լուծույթ 100մլ | հատ | 6 | | 6 | |
| 8 | Վայոկարդին 20մլ | հատ | 5 | | 5 | |
| 9 | Պարացետամոլ 500մգ | հատ | 300 | | 300 | |
| 10 | Հակափայտացման անատոքսին 1մլ | հատ | 20 | | 20 | |
| 11 | Հակակատաղության վակցինա | հատ | 5 | | 5 | |
| 12 | Կաթոցիկ ROE | հատ | 50 | | 50 | |
| 13 | Արյան անալիզի ազդանյութ/Խոլեստերոլ 1000 թեստ/ | հատ | 2 | | 2 | |
| 14 | Արյան անալիզի ազդանյութ/Գլյուկոզա 1000 թեստ/ | հատ | 2 | | 2 | |
| 15 | Յոդի լ-թ 5%-30մլ | հատ | 15 | | 15 | |

ԳՆՈՐԴ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

«Էնրիկո Մատտեի անվ. պոլ-կա» ՓԲԸ
ք.Գյումրի, Շիրակացի 13
ՀՎՀՀ 05502201
Բանկ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 205012300112-1001
Էլ.փոստ enricomatte@mail.ru
Տնօրեն Գ.Ադամյան

Հավելված N3
„ „ 2014թ. Կնքված
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/4/1>>

**Գյումրու «Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի**
**2014թ.-ի կարիքների համար գնման ենթակա**
դեղորայքի և բուժ. պարագաների

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափ ա բաժի ն | Գնման ենթակա ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2014թ. բյուջետային միջոցների հաշվին | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | Դիլատրենդ 6,25մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 2 | Դրիպտան 5մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 3 | Տեգրետոլ 200մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 4 | Տրամադոլ 50մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 5 | Տրամադոլ100մգ/2մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 6 | Ֆինլեպսին 200մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 7 | Ֆինլեպսին 400մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 8 | Կետոպրոֆեն 150մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 9 | Կետոպրոֆեն 25մգ/գ, | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 10 | Ացետիլցիստեին 100մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 11 | Ացետիլցիստեին 200մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 12 | Կարբամազեպին 200մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 13 | Վալպրոաթթու 500մգ (վալպրոատի նատրիում) | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 14 | Ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոնի նատրիում)1000մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 15 | Ցեֆուրօքսիմ 250մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 16 | Ցեֆուրօքսիմ (ցեֆուրօքսիմի նատրիում) 750մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 17 | Իբուպրոֆեն 600մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 18 | Բիսոպրոլոլ 2,5մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 19 | Սիմվաստատին 20մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 20 | Պանկրեատին 150մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 21 | Մետիպրեդ 4մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 22 | Ալոտենդին 5մգ/5մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 23 | Էնապ H 10մգ/25մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 24 | Պերինդոպրիլ 5մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 25 | Կալցի Դ-3 500/200 | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 26 | Պիկովիտ 4+ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 27 | Նոլիպրիլ Ֆորտե 5մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 28 | Ապետիզեր 100մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 29 | Օտրիվին 0,1% 10մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| Բուժ. պարագաներ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Էթիլ սպիրտ 96% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 2 | Ներարկիչ 5,0մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 3 | Ներարկիչ 3,0մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 4 | Է.Կ.Գ.-ժապավեն | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 5 | Սպեղանի 2,5x500 | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 6 | Տոնոմետր | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 7 | Լյուգոլի ջրային լուծույթ 100մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 8 | Վալոկարդին 20մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 9 | Պարացետամոլ 500մգ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 10 | Հակափայտացման անատոքսին 1մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 11 | Հակակատաղության վակցինա | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 12 | Կաթոցիկ ROE | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 13 | Արյան անալիզի ազդանյութ/Խոլեստերոլ 1000 թեստ/ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 14 | Արյան անալիզի ազդանյութ/Գլյուկոզա 1000 թեստ/ | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 15 | Յոդի լ-թ 5%-30մլ | 100% | 100% | 100% | 100% | 100% |

ԳՆՈՐԴ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

«Էնրիկո Մատտեի անվ. պոլ-կա»
ՓԲԸ

ք.Գյումրի, Շիրակացի 13

ՀՎՀՀ 05502201

Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ

Հ/Հ 205012300112-1001

Էլ.փոստ՝ enricomatte@mail.ru

Տնօրեն՝ Գ.Ադամյան